

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Շատերը միայն գիտեն, թե իրենք քրիստոնեայ են, բայց չունին քրիստոնեական հաւատքի եւ ուղղափառ վարդապետութեան հարկաւոր գիտելիքները: Ուստի հաւատքի ու անոր վերաբերող բաներու մասին խօսք բացելու ժամանակ, ընդդէմ ուղղափառութեան խօսելով կը մեղանչեն կամ ականջին տհաճ բաներ խօսելով՝ գայթակղութեան առիթներ կու տան: Ուրեմն հարկ է, որ ամէն մարդ գիտնայ հաւատքին վերաբերող ու փրկութեան համար կարեւոր գիտելիքները:

Ծնողներ, ուսուցիչներ, կնքահայրեր եւ խոստովանահայրեր պարտաւոր են երեխաներուն ուսուցանել հաւատքի էական մասերը եւ մեր ուղղափառ վարդապետութիւնը՝ ըստ սուրբ եկեղեցւոյ աւանդութեան, ինչպէս նաեւ բարոյական առաքինութիւնները: Որովհետեւ ուղղափառ հաւատքն է, որ զԱստուած ճանչնալ կու տայ եւ բոլոր առաքինութիւններու հիմքն ու խարխիսն է: Անոր կը յարի յոյսը, որ հաւատքի ծանուցած խոստացուած բարիքները ժառանգելու աներկմիտ ակնկալութիւնն է: Ասոր կը յարակցի եւ սէրը, որ միատրիչն է այն բանին՝ որուն մարդ կը հաւատայ եւ անոր վրայ յոյսը կը դնէ: Ուստի հաւատքը զԱստուած ճանչնալ կու տայ: Յոյսը կը հասցնէ Անոր, իսկ սէրը՝ կը միացնէ Անոր հետ: Կատարեալ սէրը գործել է դադրիլ չի գիտեր:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:

Մերձակալթեան երկիրներէն եղբայր մը կը գրէ. «Այստեղ շատեր կան, որոնք կախարդութեան մեղքին մէջ թաղուած են եւ չեն գիտակցիր, որ անիկա գարշելի է Աստուծոյ աչքին: Վերջերս կը գրուցէի կնոջ մը հետ, որ ինքզինք ճշմարիտ հաւատացեալ կը համարէր: Իրեն կարելի էր հանդիպիլ ամէն տեղ՝ ուր Աստուծոյ խօսքը կը քարոզուէր. բայց, այսուհանդերձ, Աստուծոյ աչքին բնաւ ալ առանձնաշատուկ դիրք մը չունի: Երբ գրուցեցինք հետը, ի յայտ եկաւ՝ որ անցեալին հմայողներու դիմած է»:

Կախարդութեան մեղքը կ'իյնայ ո'չ միայն անոր հետ զբաղողներուն, այլ նաեւ անոնց հարազատներուն վրայ: «Հարազատս կը հմայէր եւ զանազան «երկնային» նամակներ կը գրէր: Շատ տխուր ու սարսափելի օրեր անցուց: Այդ անէծքէն կը տառապէին ո'չ միայն ինքը, այլ նաեւ զաւակը, դուստրը՝ եւ ուրիշ մերձաւորներ: Սոսկալի է, որ մարդիկ Աստուծոյ մասին յստակ պատկերացում չունին, մէկ տեղէն միւսը կը նետուին, Աւետարանականներու երեկոներէն սկսեալ մինչեւ Շաբաթապահ Գալստականները: Ի'նչ սարսափելի անէծք: Անոնք թէեւ ամբողջ հոգիով կ'ուզեն, բայց չեն յաջողիր գտնել ճշմարտութիւնը: Մարդիկ կախարդութիւնը մեղք չեն համարեր, ... »:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԵՐՈՐԿ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԻՆԵՐՈՐԿ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 41

ՅԻՍՈՒՍ ԳՐԻՍՏՈՒՄ ԱԻՆՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 11.27-33

Յիսուս եւ իր աշակերտները դարձեալ Երուսաղէմ եկան:

Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտըտէր, իրեն մօտեցան քահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու քրէականները եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ, թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ՞ տրուած էր իրեն՝ թէ մարդոցմէ: Պատասխանեցէ՛ք տեսնեմ»:

Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. «Եթէ ըսեմք՝ Աստուծմէ տրուած էր, մեզի պիտի ըսէ ինչո՞ւ չհաւատացիք իրեն. իսկ՝ մարդոցմէ էր չենք կրնար ըսել: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախճալով, որովհետեւ ամէն մարդ գիտէր թէ Յովհաննէս ճշմարտապէս մարգարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Ձեմք գիտեք»:

Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. «Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

ՇՆՈՐՀՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Ամենահինամ եւ միշտ ողորմած Տէր, քու անսահման բարերարութիւններուդ վրայ՝ նաեւ մարդոց պարգեւեցիր աստուածաշունչ Կտակարաններուդ մէջ դրոշմուած ճշմարիտ օրէնքդ, որպէսզի անկէ սորվելով քու սուրբ կամքիդ արտացոլացումը եղող պատուիրաններդ, զանոնք կատարենք միշտ քու կամքիդ համաձայն, մեր հոգիներու փրկութեան եւ օգուտին համար:

Կ'աղաչեմ, Տէր, իմաստութեանդ լո՛յսը ծագէ եւ վերանորոգող հզօր Հոգիիդ շնորհքները թափէ իմ խաւարած հոգիիս մէջ, եւ իմ մտքիս մէջ դրոշմէ աստուածային երկիւղդ եւ ջերմեռանդութիւնդ, որպէսզի արժանի կերպով կարդամ աստուածաշունչ քու Մատեանդ, բարեպաշտ հաւատքով ու յարգանքով, եւ յօժար սրտով ու սիրով ականջ դնեմ անոր մէջ պարունակուած բոլոր խօսքերուն: Տո՛ւր ինծի նաեւ շնորհքը՝ աներկմիտ հաւատքով հաւատարու եւ ընդունելու անոր մէջ բովանդակուած ճշմարտութիւնը, որպէսզի անխախտ յոյսով ապաւինիմ խոստացուած բարիքներուն, շնորհքներուն եւ յաւիտեանական կեանքին՝ Սուրբ Հոգիիդ շնորհքովը. որուն փա՛ռք յաւիտեանս: Ամէն:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏԱՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Տասներկու աշակերտներու կողքին, Յիսուս նաեւ կ'ընտրէ 72 աշակերտներ եւ կու տայ անոնց նոյն իշխանութիւնը, զոր տուած էր իր տասներկու աշակերտներուն, աւետարանը քարոզելու, դեւեր հանելու եւ հիւանդներ բժշկելու:

72 աշակերտներուն անունները որեւէ տեղ չեն յիշուիր, սակայն անոնք եւս Քրիստոսի կողմէ առաքելութեան կը զրկուին զանազան շրջաններ:

Տասներկու առաքելներու եւ 72 աշակերտներու նախատիպը կը գտնենք Հին Կտակարանին մէջ, երբ երբայեցի ժողովուրդը անպատային թափառումներու ընթացքին կը հասնին Եղիմ, այնտեղ կը գտնեն 12 աղբիւրներ եւ 72 արմաւենիներ եւ այնտեղ բնակութիւն կը հաստատեն (տե՛ս Ելք 15:27):

Իմաստութիւնը ցանապարհներուն սկիզբը կը փառաբանուի եւ հրապարակներուն վրայ բարձրաձայն կը հռչակուի, պարիսպներուն բարձունքէն կը ֆարոգուի, ամրոցներուն դռներուն կը յայտարարուի եւ ֆաղափներու դարպասներուն համարձակօրէն կը խօսուի:
(Առակաց Ա. 20-21)

ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՐԱՏ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻԶ

Երբեք մի՛ ունենաք խարդախութիւն եւ կեղծաւոր խորհուրդներ, անհաւատ ու անսուրբ վարք, որոնք կորուստի պատճառ են: Այլ միշտ ձեր հոգիներուն մէջ կրեցէ՛ք լուսաւոր սրբութիւնը անբիծ սիրոյ երախտիքներով՝ ծաղկելով առաքինասէր վարքով եւ պսակուելով յաւիտենական յոյսով ի գովեստ Աստուծոյ փառքին:

Քանցի Հոգիի կրակով անարատ սրբութեան հասնելու Ամենասուրբ երրորդութեան օթեւանը կ'ըլլանք երկրի վրայ: Որովհետեւ բոլոր սխրանքներու եւ առաքինութիւններու զարդը տեսանելի ու անտեսանելի՝ հոգիի եւ մարմնի սրբութիւնն է:

Ամենայն արդարութեան եւ արիութեան թազը եւ պարծանքներու պսակը միշտ սրբութիւնն է, եւ երկնաւորներու ու երկրաւորներու բոլոր դասերու փառքը, պատիւն ու մեծարանքը սրբութիւնն է, որ կը մօտեցնէ եւ հարազատ կը դարձնէ Քրիստոսի՝ մեր Աստուծոյն եւ բոլոր երկնային զօրքերուն:

ՍԻՐԵԼ ԲԱՐԵԿԱՍԸ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԳԱՌՆԱԼ ԱՆՈՐ

Երբ հնարաւորութիւն ունիս կարօտեալին օգնելու՝ մի՛ տնտնար:

Եթէ կրնաս բարիք գործել, մի՛ ըսեր. «Գնա՛, վաղը եկո՛ւր, կու տամ», որովհետեւ չես գիտեր, թէ վաղը ինչ կը պատահի քեզի:

(Առակած 3:27-28)

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

է.– Աստուած երբ հարցուց, թէ՛ «Կայէ՛ն, ո՞ւր է եղբայրդ», ան ստեց ու ըսաւ. «Ձեմ՝ գիտեր»: Աստուած հարցուց որպէսզի գոջալով մեղայ ըսէր, մինչեւ ան լրբութեամբ պատասխանեց. «Մի՞թէ եղբօրս պահապանն եմ»: Աստուած ըսաւ. Պահապանը չես, իսկ ինչո՞ւ սպաննողը եղար: Եւ Աստուած եօթը պատիժ դրկեց անոր վրայ Աստուած ըսաւ.

ա.– Անիծեալ եղիր երկրին վրայ, ուր եղբորդ արիւնը հոսեցաւ:

բ.– Աշխատանքով ու յոգնութեամբ պիտի վարես երկիրը:

գ.– Հողը քեզի պիտի չտայ իր զօրութիւնը՝ պտուղն ու բերքը, որովհետեւ անմեղին արիւնով ներկեցիր զայն:

ե.– Պիտի երեքս ծառի նման, որ անդադար կը շարժի հովէն:

զ.– Պիտի տատանիս ծովի նման, որ կը ծփայ ալիքներէն:

է.– Նշան դրաւ անոր վրայ, որպէսզի ամէն ո՛ք գիտնայ թէ եղբայրասպան է եւ անիծեալ: Այդ նշանը բորոտելով՝ մարմինը սկսաւ դողդողալով շարժիլ, եւ չկրցաւ կերակուրն ու ըմպելի բերանը տանիլ:

Արդ, Կայենին՝ առաջին մարդասպանին եւ եղբայրատեացին գործերուն ու պատուհասներուն մասին գրեցի անոր համար, որ գիտնա՛ք, թէ ամէն մարդ որ իր եղբայրը, այսինքն ընկերը ատէ, մարդասպան է Կայենի նման, որովհետեւ բոլոր մարդիկ իրարու եղբայր են ստեղծագործութեամբ: Քրիստոնեաները ա՛յլ աւելի եղբայր են, որովհետեւ միեւնոյն Աւագանին ծնունդ ըլլալով՝ երկնաւոր Հօր որդի են եւ ամէն օր կ'ըսեն. «Հայր մեր որ երկինքն ես»:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ԼԱՒ ՍՈՐՎԵՑՈՒՄ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՎ

Բնութեան վերաբերեալ ամէն բան, (մասնաւոր բնութեան աշխարհին մէջ) ունի իր ժամանակն ու եղանակը: Ձեմք կրնար որեւէ բան մեր ուզած ատեն ցանել եւ ուզած ատեն բերք ակնկալել: Ագարակապաններ աշնան վերջաւորութեան կը ցանեն ցորենը, որպէսզի ամառուան սկիզբը հնձնեն: Նոյնպէս՝ բանջարեղէնները ունին իրենց ցանուելու եղանակը, ժամանակը եւ բերք տալու ժամանակը: Ժողովողի գիրքի իմաստուն հեղինակը շատ ցիշոյ է, երբ կ'ըսէ. «Ամէն բանի ատենը կայ, ու երկինքի տակ եղող ամէն բանի ժամանակը» (ժող. 3:1):

Նոյնպէս մանկավարժութիւնը կ'ուսուցանէ, թէ մեր գաւակները կրթելն ու անոնց սորվեցնելն ալ իր ժամանակը եւ եղանակը ունի: Մասնաւոր երբ իրենց փոքր տարիքէն՝ մասնաւոր հետաքրքրական պատմութիւններով կամ երաժշտութեամբ կրթենք եւ մեծցնենք, այդ ուսուցանուածը կը դառնայ ազդեցիկ եւ մնայուն: Նոյնպէս, երբ Աստուածաշունչէն պատմութիւններ կը պատմենք մեր մանուկներուն, այդ կանուխ տարիքին այդ պատմութիւնները կը դառնան ազդեցիկ ազդակներ անոնց նկարագրի կազմութեան մէջ (Ս. Կոր. 10:11): Հաւատքի փոքր սերմերը կարելի է մշակել բարեբեր հողի մէջ եւ այդ մէկը կ'օգնէ մանուկներուն հասկնալ եւ հաւատալ, թէ ինչպէս Աստուած առաջնորդած էր իրենց նախահայրերը պատմութեան ընթացքին: Աստուածաշունչի պատմութիւնները կ'օգնեն նաեւ ցոյց տալու, թէ Աստուած որքան մօտէն առնչակից է մեր կեանքներուն հետ: Ուրեմն, երբ մեր գաւակները դեռ փոքր են, սորվեցնենք անոնց, թէ Աստուած ի՛նչ բարիքներ ըրած է՝ սերունդէ սերունդ (Բ.Օր. 11:1-21):

Մեր գաւակներուն վաղուան նկարագրի կազմութիւնը կախեալ է այսօրուան մեր անոնց սորվեցուցածներէն:

ԵՍԱՑԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ

17.7-14

Երբ այն օրը գայ, մարդը իր արարիչին միայն պիտի յուսայ, իր աչքերը Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յառէ:

Այլեւս իր յոյսը պիտի չկապէ մեծեաններուն կամ իր ձեռագործ չաստուծներուն: Մարդիկ միայն Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յուսան: Այլեւս իրենց աչքերը պիտի չյառեն իրենց գարշելի չաստուծուհիին փայտէ արծանիկներուն:

Այն օրը փառաբանող պիտի լուին եւ աւերուին, այնպէս՝ ինչպէս պարպուեցան Ամորհացիներուն եւ Խեւացիներու փառաբաները Իսրայելացիներու յարձակումին դիմաց, քանի որ դուն լիցցիր զԱստուծ, քու փրկիչդ, եւ մոռցար Տէրը, քու օգնականդ: Արդ, քանի որ քու տնկած պարտէզդ եւ ցանած սերմերդ օտար չաստուծներու նուիրուած են, ինչ որ ալ տնկես, եւ նոյնիսկ եթէ ցանածդ նոյն օրն իսկ ծաղկի՝ հունձիս արդիւնք պիտի չունենաս. այն օրը Աստուծ հօր մը պէս իր ժառանգութիւնը պիտի բաժնէ, եւ դուն որպէս հատուցում՝ տրամութիւն պիտի ունենաս:

Վա՛յ բոլոր այն ազգերուն որոնք ալիքոծ ծովու մը պէս Աստուծոյ դէմ կը մոլեգնին եւ որոնք ալիքներու նման կը շառաչեն:

Նոյնիսկ եթէ ծովերուն պէս անհամար ըլլան անոնք, ովկիանոսի ալիքներուն սաստկութիւնն իսկ ունենան՝ սակայն Աստուծ պիտի ցամէ ու ցրուէ զանոնք այնպէս՝ ինչպէս հովը կը փշէ յարդին շիւղը, ինչպէս մորիկը կ'ալէ կառներուն հանած փոշին:

**Շարունակել
Աստուածաշունչէն**

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԻ

ՆԱՄԱԿԸ

ԿՈՐԻՆՏԻՆԵՐՈՒՆ

13.5-13

Քննեցէ՛ք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: Փորձեցէ՛ք դուք ձեզ: Քրիստոսի ներկայութիւնը կը զգա՞ք ձեր ներսիդին, թէ պարզապէս իր անունը կը կրէք: Յուսամ գիտէք, թէ մենք այդ փորձը յաջողապէս կատարած ենք: Եւ կը խնդրենք Աստուծմէ որ չարիք չգործէք: Ասիկա քսելով չենք ուզեր մենք մեզ ընտիր ցոյց տալ. ընդհակառակը, կ'ուզենք որ դուք բարին գործէք, նոյնիսկ մեզ ամօթով ձգելու չափ: Որովհետեւ Աստուծոյ նշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ կրնանք միայն անոր համար աշխատիլ: Ուրախութեամբ յանձն կ'առնենք տկարանալ, միայն թէ դուք զօրանաք: Ուստի կ'աղօթենք որ հետզհետէ կատարեալ ըլլաք: Ասիկա հեռուէն կը գրեմ ձեզի, որպէսզի երբ գամ՝ պէտք չունենամ խստութեամբ վարուելու ձեզի հետ ա՛յն իշխանութեամբ որ Տէրը ինձի տուաւ ուղղելու համար եւ ո՛չ թէ պատժելու:

Կը փակեմ նամակս, եղբայրներ. ողջ եղէ՛ք: Կատարեալ ըլլալու աշխատեցէ՛ք. միտքարուեցէ՛ք: Համերաշխ եւ խաղաղութեամբ ապրեցէ՛ք իրարու հետ, եւ այն ատեն խաղաղութեան ու սիրոյ Աստուծը ձեզի հետ պիտի ըլլայ:

Սիրոյ համբոյրով ողջունեցէ՛ք զիրար: Այստեղի քրիստոնեաները կ'ողջունեն ձեզ:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒՄԾԱՇՈՒՆԶԷՆ**